

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան

պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 24 » մայիսի 2013 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

- 1.1. ԳՊՄԻ-ի որակի ապահովման և վերահսկման հանձնաժողովը ձևավորվում է ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից:
- 1.2. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի որակի ապահովման և վերահսկման մշտական Հանձնաժողովը (սյուսիետ՝ հանձնաժողով) իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԳՊՄԻ-ի կանոնադրությանը, ԳՊՄԻ-ի ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:
- 1.3. Հանձնաժողովի գործունեության նպատակն է կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախագծերի պատրաստումը և ԳՊՄԻ-ի գիտական խորհրդին դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:
- 1.4. Հանձնաժողովն իր իրավասություններին վերաբերող խնդիրները քննարկում է ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի և/կամ ռեկտորի հանձնարարությամբ՝ ըստ գիտական խորհրդի կողմից հաստատված որակի ապահովման քաղաքականության և ռազմավարության:
- 1.5. Հանձնաժողովը համագործակցում է ԳՊՄԻ-ի որակի կենտրոնի հետ, քննարկում և ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում որակի կենտրոնի կողմից որակի քաղաքականությանը վերաբերող նախագծերը:

- 1.6. Հանձնաժողովը համակարգում և վերահսկում է ԳՊՄԻ-ում իրականացվող որակի ապահովման ողջ գործընթացը:
- 1.7. Հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից:
- 1.8. Սույն կանոնակարգը հաստատվում է ԳՊՄԻ-ի գիտխորհրդի կողմից և ուժի մեջ է մտնում գիտական խորհրդի հաստատուման պահից:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

- 2.1. Մշակել որակի ներքին և արտաքին ապահովման պետական և միջազգային չափորոշիչներին համապատասխանող իրավական նորմատիվ ակտերի նախագծեր:
- 2.2. Տալ ԳՊՄԻ-ի որակի ներքին ապահովման ոլորտին առնչվող չափորոշիչների, գործընթացների և/կամ ընթացակարգերի կիրարկման, նոր և վերանայված կրթական ծրագրերի հաստատման վերաբերյալ երաշխավորություններ և առաջարկներ:
- 2.3. Համակարգել և վերահսկել ԳՊՄԻ-ի որակի ապահովման բոլոր ենթակառույցների ու աշխատախմբերի գործունեությունը՝ նպաստելով որակի շարունակական բարելավմանը և կայունությանը (տե՛ս Հավելված 1):

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

- 3.1. Հանձնաժողովն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովի առաջին նիստը հրավիրում է ռեկտորը, որի ընթացքում ընտրվում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի հետագա նիստերը հրավիրում է հանձնաժողովի նախագահը:
- 3.2. Հանձնաժողովի նիստերն իրավագոր են , եթե նրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը: Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք:
- 3.3. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է նրա կողմից նշանակված հանձնաժողովի անդամը:
- 3.4. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվող օրակարգով:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՈՐԾԱՌՈՒՑՅՈՒՆԵՐԸ

Հանձնաժողովի նախագահը.

- 4.1. հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը,
- 4.2. համակարգում է հանձնաժողովի որոշումների ընդունման գործընթացը,
- 4.3. առանձին հարցերի քննարկման նպատակով հրավիրում է համապատասխան մասնագետների և փորձագետների,
- 4.4. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը, ինչպես նաև որակի ապահովման գործընթացի վերահսկման արդյունքները,
- 4.5. իրականացնում է ԳՊՄԻ-ի ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՂԱՄԸ

Հանձնաժողովի անդամը.

- 5.1. մասնակցում է հանձնաժողովում բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներին,
- 5.2. քվեարկությունների միջոցով մասնակցում է որոշումների ընդունմանը,
- 5.3. հանձնաժողովի որոշմամբ ԳՊՄԻ-ի գիտական խորհրդում ներկայացնում է հանձնաժողովի կողմից մշակված նախագծերը,
- 5.4. իրականացնում է ԳՊՄԻ-ի ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով իրեն վերապահված այլ լիազորություններ,
- 5.5. հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ հանձնաժողովի անդամը կարող է ունենալ հատուկ կարծիք և այն ներկայացնել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի նիստում:

Հավելված 1 Որակի ապահովման համակարգի կառուցվածքը ԳՊՄԻ-ում

